

լազանն եւ գողեսցէ այսպէս . Ահա՛ առաջնորդ սուրբ աթոռոյն Երուսաղէմի հինգ հարիւր զուռուչ օժիտս պարգեւէ նորակնունք եպիսկոպոսին ձերոյ առ ի պատիւ բազում երախտեացն, եւ չորեքին եկեղեցիքդ եւ եկեղեցականքդ ըստ արժանեաց սորա բերէք զընծայս առաջի մեր, զի որ վասն ձեր օգտի եւ եկեղեցեացդ ծախեալ են փողք՝ զնոյն պարտսն վճարեսցէ, եւ կոյս ընդ կուսի որ ընդ ձեզ պսակեցի՝ զչնորհաւորութիւնն ձեր եւ սորա օրհնութեամբ ասեմ: Մատերո՛ւք, ո՛վ որդիք լուսոյ եւ արքայութեան, ի չքնազ հարսնարանս մասնաւորեալ ի վարձս առաջնորդին ձերոյ ընտրելոյ, մեծահանճարոյ եւ բարեսիրի, ճրագին՝ որ յաշտանակի . ցնծացարո՛ւք համախումբք քրիստոսեան Կոստանդնուպոլսի՝ ի լոյս սորա լուսաւորեալք, ըստ որում որպէս ոմն ծեր չըջէր ի մէջ ժողովրդեան յԱնդրիանուպոլիս եւ այլ ոչինչ գիտէր աւել, բայց միայն թէ Մասնակից եղիք, եղբա՛րք: Ուրում յաւուր միում չհանդուրժեալ իմ, ասեմ . Այս ի՞նչ մասնակից է, մասնակի՞ց լինիլ զառինն եւ զինւոյ Գարայ աղածի: Եւ մերձակայք մեր ի պահու աղօթից զչարտազ կիւլուշի արարեալ՝ ասէ Ապրօ կեալուր . Հէր այպի քի սուլթան պիփէտէնտէթ հունէրէսթ: Եւ ես ասեմ . Քեօյընէ կեօրէ շահնասի, եւ որ յառասպելս ասի՝ Թաշաղըմ չէհրէլի, կեօզի չափախլի, իւ վարլանտի քիւփ՝ պուլտի զափաղի: Ապրօ ասէ . Պապլի պապլըն թափմասս կէչէր կիւնլէր, ա՛հ վա՛հ: Ըստ որում այնու զպարտսն վճարել Ապրօզատէի, զի այնուհետեւ լիցի զափիքեհասի ի դուռն վէզիրի ցանկ՝ զի յաւիտեանս ժառանգեսցէ զպատրիարքութիւն իւր միշտ փառօք: Եւ այլ եւս զոն, զոր պատկառիմ ի լսեցուցանել:

Թ . — Եւ զոր զրեցի համոզութիւն Պետրոսեան ընդ Խոսրովու եւ ընդ Հոնեցւոյն, ոչ իսկ ինչ նշմա-